

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

Լեւոնտոյնի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 25-ի նիստի.

գ. Լեւոնտոյն

Համայնքի ղեկավարի աշխատասենյակ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Էդիկ Համբարձումի Չախալյանը

Մասնակցում էին՝

Համայնքի ավագանու անդամներ՝ Վիտալի Ասադովը, Բոլոտին Իվանը, Քրիստինե Խառատյանը, Անդրեյ Կորոյով, Վասիլի Կորոյովը; համայնքապետարանի աշխատակիցները:

ՆԻՍՏԸ - Էդիկ Չախալյանը ժամը 11:00-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստը վարողն առաջարկեց հաստատել օրակարգը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0 ընդունվեց որոշում:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը /N35/՝

1. Լեւոնտոյնի համայնքի 2024 թ-ի բյուջեն հաստատելու մասին

զեկ.Մ Բոլոտինա

2.Լեւոնտոյնի համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին

զեկ. Ա.Հարությունյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. **ԼՍԵՑԻՆ** - Լեւոնտոյնի համայնքի 2024 թ-ի բյուջեն հաստատելու մասին որոշման նախագիծը

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ Մարիյա Բոլոտինան: Նա ներկայացրեց Լեւոնտոյնի համայնքի 2024 թ-ի բյուջեն: Բացված տեսքով ներկայացրեց ավագանու անդամների համար առավել կարևոր հոդվածները: Ավագանիները քննարկեցին, տվեցին իրենց հուզող հարցերը, և հայտնեցին իրենց համաձայնությունը:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում: /N36/

2. **ԼՍԵՑԻՆ** - "Լեւոնտոյնի համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին" որոշման նախագիծը

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Անահիտ Հարությունյանը, որը ներկայացրեց Լերմոնտովո համայնքի կամավոր խնդիրները և դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, իրականացման կարգը: Ավագանու անդամները տվեցին իրենց համաձայնությունը:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում: /N37/

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



[Handwritten signature]

ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

1. ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ *[Handwritten signature]*

2. ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ *[Handwritten signature]*

3. ԽԱՌԱՏՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ *[Handwritten signature]*

4. ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ *[Handwritten signature]*

5. ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ *[Handwritten signature]*